



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱԴԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03”. 06. 2016 թ. (արձ. № 10)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “06”. 06. 2016 թ.
--	---

**Համալսարանի գործունեության պլանավորման,
կառավարման և մշտադիտարկման
քաղաքականություն**

Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն

Նախաբան

Համալսարանի գործունեության հիմքն է համալսարանի զարգացման ռազմավարական պլանը և ծրագիրը, որի բաղադրիչ մաս է համարվում ֆինանսական ռազմավարությունը: Ֆինանսական ռազմավարության հստակ պլանավորումը բոլոր գերական ուղղություններով երաշխավորում է համալսարանի գործունեության արդյունավետ պլանավորումը, կառավարումը և մշտադիտարկումը:

Նպատակ

Սույն քաղաքականության նպատակն է համալսարանի գործունեության և բոլոր գործընթացների հստակ պլանավորման, կառավարման և մշտադիտարկման սկզբունքների և կարգերի սահմանումը, կազմակերպումը և իրականացումը, տվյալ գործընթացների կազմակերպման սկզբունքների պահպանումը և համալսարանի գործունեության զարգացումը:

Պլանավորման, կառավարման և մշտադիտարկման գործընթացների նպատակն է ֆինանսական հենքի վրա հիմնված գործունեության հստակ պլանավորումը, կառավարման գործընթացների և համակարգի բարելավմանը ուղղված օբյեկտիվ, հավաստի տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և գնահատումը:

Կիրառման ոլորտ

Քաղաքականությունը կիրառվում է համալսարանի կողմից սահմանված, զարգացման ռազմավարական ծրագրից բխող գերակա ուղղությունների վրա:

Նկարագրություն

Համալսարանը, ՀԱԱՀ ֆինանսների տնօրինման քաղաքականության հիման վրա պլանավորում, կառավարում և մշտադիտարկում է իր գիտակրթական գործունեությունը:

1. Համալսարանի Որակի կառավարման համակարգի վերլուծություն և գնահատում

Ռազմավարական պլանավորման համար իրականացվում է Համալսարանի գործունեության վերլուծություն բոլոր ռազմավարական ուղղություններով:

Վերլուծությունը իրականացվում է նախապես սահմանված չափանիշների և չափորոշիչների հիման վրա:

Վերլուծության հիմնական խնդիրն է համալսարանի Համալսարանի Որակի կառավարման համակարգի ուժեղ, թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների բացահայտումը և վեր հանումը՝ տվյալ ուղղությամբ բարելավմանը ուղղված որոշումների կայացման համար:

2. Համալսարանի գործունեության պլանավորում և բյուջեի մշակում

Համալսարանի գործունեության պլանավորումը գործընթաց է, որի միջոցով ձևավորվում են կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական պլանները ռեսուրսային և այլ միջոցների ապահովման տեսանկյունից:

Ռազմավարական պլանավորման հիմնական սկզբունքն է Համալսարանի ապահովող և օժանդակող գործընթացների, որակի կառավարման փաստաթղթային հենքի բարելավումը և արդիականացումը:

Տվյալ գործընթացը արդյունքում բերում է բյուջեի մշակմանը (Համալսարանի բյուջեյի պլանավորում):

Բոլոր ռեսուրսների պլանավորումը և բյուջեի մշակումը պետք է ներառի հետևյալ բաղադրիչները՝

❖ *Հստակ սահմանված նպատակներով և խնդիրներով պլան:*

Պլանը պետք է հեշտ հասկանալի լինի, ներառի ձեռքբերվող նպատակները և չափելի խնդիրները: Նպատակները և խնդիրները պետք է լինեն հստակ, որպեսզի ինտեգրվեն ընդհանուր պլանավորման և բյուջետավորման գործընթացի մեջ:

❖ *Պլանի իրականացման համար անհրաժեշտ առանցքային գործոնների բացահայտման (որոշման) և գնահատման գործընթաց:*

Առանցքային գործոնների գնահատումը, ընտրումը և վերջնական օգտագործումը պետք է հիմնավորված լինի առանցքային գործոնների բնույթը հասկանալու վրա և ազդի նպատակների և խնդիրների ձեռքբերմանը:

❖ *Բյուջեի մշակման գործընթաց, որը ներառում է համապատասխան տվյալների բազմակողմանի վերլուծություն և ապահովում է կառավարչական որոշումների կայացում:*

Տվյալ գործընթացը պետք է երաշխավորի տվյալների հավաքման և վերլուծության ստուգված մեթոդների հաջորդական օգտագործումը, ինչպես նաև պահպանի համապատասխան ֆինանսների և բյուջետավորման քաղաքականությունները:

Վերլուծությունը ներառում է՝

- Նախորդ տարվա պլանավորման գործընթացում օգտագործված բոլոր ենթադրությունների, վերլուծությունների, պլանների և բյուջեների վերագնահատումը:
- Նախորդ տարիների բյուջեների և ֆինանսների արդյունավետության ուսումնասիրումը:
- Ընթացիկ տարվա արդյունավետության գնահատումը՝ բյուջեյի նպատակների և խնդիրների նկատմամբ:
- Փոփոխությունների բացահայտումը, որոնք անհրաժեշտ են նոր պլաններում՝ նպատակների և խնդիրների մեջ փոփոխությունների արտացոլման համար:

❖ *Բյուջե, որը ձևավորում է նպատակները և խնդիրները ռեսուրսային կտրվածքով:*

Բյուջեն պետք է լինի իրատեսական և ձեռքբերելի, և ուղեկցվի նկարագրական մեկնաբանությամբ:

Բյուջեյի բաղադրիչներն են՝

- Բոլոր ֆինանսավորման աղբյուրները,
- Եկամուտների գնահատումը,
- Հիմնական ծախսերը ըստ տարակարգերի՝ ներառելով անուղակի ծախսերի որոշումը,
- Ռեսուրսների պահանջարկի նկարագրությունը,
- Օգտագործվող հիմնական ենթադրությունների և կանխատեսման մեթոդների բացատրությունը,
- Ընթացիկ գործողությունների մեջ էական փոփոխությունների բացահայտումը,
- Գործողությունների պլանները:

Բյուջեյի հիման վրա պլանավորվում է համալսարանի ուսումնական, գիտական, խորհրդատվական գործունեությունը:

Պլանավորման փուլում առանձնացվում է *ռեսուրսային (ֆինանսական, մարդկային, նյութա-տեխնիկական) պլանավորումը* գիտակրթական գործընթացների արդյունավետության ապահովման համար:

3. Համալսարանի գործունեության կառավարում՝ ֆինանսական հենքի վրա

Համալսարանի գործունեության կառավարումը գործընթաց է, որն երաշխավորում է, որ համալսարանի կառավարման գործընթացիների իրականացումը համահունչ է և համապատասխանում է ֆինանսների պլանավորմանը և բաշխմանը:

Համալսարանի գործունեության կառավարումը հիմնվում է բյուջեյով նախատեսված ռեսուրսների արդյունավետ բաշխման և կառավարման վրա:

Համալսարանի գործունեության կառավարումը իրականացվում է Համալսարանում սահմանված կառավարման ենթակառուցվածքի և փաստաթղթավորված նորմատիվային հենքի վրա:

Համալսարանի գործունեության կատարումը իրականացվում է հաստատված ռազմավարական պլանին և միջոցառումների պլաններին համապատասխան:

Համալսարանի գործունեության կառավարումը ներառում է՝

- Պլանավորված գործընթացների իրականացումը՝ հիմնված համալսարանի բյուջեյի վրա,
- Իրականացվող գործընթացների վերահսկումը՝ ներառյալ նյութական և այլ միջոցների վերահսկումը, համապատասխանության ստուգումը հաստատված բյուջեյում նշված ռեսուրսային ապահովվածության հետ:
- Համալսարանի գործունեության արդյունավետության վերլուծությունը և գնահատումը:
- Ուղղիչ գործողությունների իրականացում: Ուղղիչ գործողությունները անհրաժեշտ է կիրառել ժամանակին, ըստ անհրաժեշտության և արտացոլեն հետագա պլանավորման գործընթացների բարելավումը:

Մշտադիտարկումը համալսարանի գործունեությանը վերաբերող ինֆորմացիայի համակարգված անընդհատ ուսումնասիրումն ու հավաքագրումն է, ներառյալ պլանավորված միջոցառումների համախումբը, ռեսուրսների և գործընթացների վիճակի վերահսկման մեթոդներն ու միջոցները և դրանց արդյունքները:

Մշտադիտարկման, չափումների, վերլուծության և գնահատման հիմնական նպատակն է համալսարանի գործունեության ընթացիկ վիճակի վերաբերյալ հավաստի տվյալների ստացումը, որոնց վերլուծության արդյունքը թույլ է տալիս իրականացնել ուղղիչ, նախագգուշացնող գործողությունների, ինչպես նաև գործողություններ, ուղղված Որակի կառավարման համակարգի և դրա առանձին գործընթացների բարելավմանը:

Տվյալ գործընթացը նախատեսում է միջոցառումներ, ուղղված դասավանդման, վարչարարական և գիտական գործունեությունների որակի ապահովմանը:

Մշտադիտարկման գործընթացի շրջանակներում իրականացվում է մուտքային և ելքային տվյալների, տարբեր գործընթացների ուղղությամբ նպատակների ձեռքբերման ցուցանիշների հավաքագրում:

Մշտադիտարկման գործընթացում անհրաժեշտ է նախապես որոշել ինֆորմացիայի աղբյուրները, հաշվի առնել հավաքագրվող տվյալների անհրաժեշտությունը և օգտակարությունը:

Մշտադիտարկման արդյունքում հավաքագրված ինֆորմացիան ենթարկվում է վերլուծության և գնահատման:

Վերլուծության արդյունքները օգտագործվում են՝

- Շահակիցների բավարարվածության աստիճանի գնահատման համար,
- Որակի կառավարման համակարգի գործընթացների գործառնման արդյունավետության գնահատման համար,
- ղեկավար կազմի կողմից որոշումների կայացման համար,
- ուղղիչ գործողությունների պլանավորման և իրականացման համար:

Քաղաքականության իրականացում

Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման գործընթացը պետք է երաշխավորի ՀԱԱՀ գիտակրթական գործունեության զարգացումը, գնահատման գործընթացի բարելավումը, ապահովի որոշումների կայացման գործընթացի կատարելագործումը և Համալսարանի զարգացման կայունության ապահովումը:

Պատասխանատվություն

Յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պարտականությունն է երաշխավորել, որ գիտակրթական գործընթացի պլանավորումը և կառավարումը իրականացվում է արդյունավետ բոլոր կազմակերպչական մակարդակներում:

Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման, մշտադիտարկման քաղաքականության մշակման, ներդրման և իրականացման համար պատասխանատու են՝

- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը,
- Ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորը,
- Ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորը,
- Ֆակուլտետների ղեկանները,

- Ամբիոնի վարիչները,
- Տվյալ ոլորտի համար պատասխանատու այլ ստորաբաժանումները և աշխատանքային խմբերը:

Քաղաքականության վերանայում

Սույն քաղաքականությունը ենթարկվում է վերանայման համալսարանի «Փաստաթղթերի և գրանցումների կառավարում» ընթացակարգի համաձայն: